Նախագահ Դիտեր Ֆ. Ուխդորֆ
Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական

Աստծո խոսքն ուղղված Իր զավակներին

Ուրբ գրությունները մեզ ասում են, որ առաջին բանը, որ Աստված արեց տղամարդուն և կնոջը ստեղծելուց հետո, նրանց հետ խոսելն էր:[1] Նա տվեց նրանց կարևոր տեղեկություններ և թանկարժեք հրահանգներ: Նրա նպատակն էր ոչ թե ծանրաբեռնել կամ անհանգստացնել նրանց, այլ առաջնորդել դեպի երջանկություն և հավիտենական փառք:

Եվ դա միայն սկիզբն էր: Այդ օրվանից մինչև այսօր Աստված շարունակում է հաղորդակցվել Իր զավակների հետ: Նրա խոսքերը պահվել, փայփայվել և ուսումնասիրվել են յուրաքանչյուր սերնդի աշակերտների կողմից: Դրանք թանկարժեք են եղել նրանց համար, ովքեր փնտրել են Աստծո կամքը, և դրանք վկայում են այն ճշմարտության մասին, որ «Տէր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթէ չ՛յայտնէ իր խորհուրդը իր ծառաներին՝ մարգարէներին»:[2]

Ի սկզբանե սա եղել է օրինաչափություն, և այդ օրինաչափությունը շարունակվում է այսօր: Սա պարզապես Աստվածաշնչյան գեղեցիկ պատմություն չէ. սա Աստծո՝ Իր զավակներին կարևոր ուղերձներ հաղորդելու հաստատած ձևն է: Նա անհատներ է բարձրացնում մեր շրջապատից, կանչում է նրանց լինել մարգարեներ և նրանց խոսքեր է տալիս ասելու, որոնք մենք հրավիրվում ենք «ընդունել, ինչպես որ [Իր] իսկ բերանից»:[3] Նա հայտարարել է. «Լինի դա իմ իսկ ձայնով, թե իմ ծառաների ձայնով՝ միևնույն է»:[4]

Սա Վերականգնման ամենափառահեղ, քաջալերող և հույսով լի ուղերձներից է. Աստված չի լռում: Նա սիրում է Իր զավակներին: Նա չի թողել մեզ թափառելու խավարում:

Ամեն տարի երկու անգամ՝ ապրիլին և հոկտեմբերին, մեր հրաշալի գերագույն համաժողովների ժամանակ մենք հնարավորություն ենք ունենում լսելու Տիրոջ ձայնը Նրա ծառաների միջոցով:

Ես անձնապես վկայում եմ ձեզ, որ նախքան գերագույն համաժողովի խոսնակն իր քայլերը կուղղի դեպի հարթակը, նա հսկայական ջանքեր է ներդրել, աղոթել և ուսումնասիրել՝ ի պատասխան խոսելու հանձնարարությանը: Համաժողովի յուրաքանչյուր ելույթ արդյունք է անհամար ժամերի նախապատրաստության և սրտառուչ աղերսի, որ հասկանան, թե ինչ է Աստված կամենում, որ Իր Սրբերը լսեն:

Ի՞նչ կարող է պատահել, եթե մենք՝ լսողներս, ինչպես խոսնակները, համապատասխանաբար նախապատրաստվենք լսելու: Ինչպե՞ս կփոխվի մեր մոտեցումը գերագույն համաժողովի հանդեպ, եթե մենք դիտենք համաժողովը որպես անձամբ Տիրոջից ուղերձներ ստանալու հնարավորություն: Գերագույն համաժողովի խոսքերի և երաժշտության միջոցով մենք կարող եք ակնկալել ստանալ անձնական պատասխաններ մեր ունեցած ցանկացած հարցի կամ խնդրի վերաբերյալ:

Եթե ձեզ երբևէ մտահոգում է այն հարցը, թե արդյոք Երկնային Հայրն իսկապես կխոսի ձեզ հետ, ես կհիշեցնեմ ձեզ այն պարզ, բայց իմաստալից խոսքերը, որ երգում են մեր Երեխաների Միությունում. «Ձավակն [ես դու] Աստծո, Նա է [քեզ] կյանք տվել»: Նրա նպատակն է օգնել մեզ, որ մի օր վերադառնանք ու ապրենք Իր հետ:

Եթե դուք մոտենաք Երկնային Հորը որպես Նրա զավակ, կարող եք խնդրել Նրան ողջ սրտով. «Առաջնորդիր, քայլիր ինձ հետ, որ ուղին գտնեմ: Սովորեցրու՝ ինչ անել, որ մի օր Քեզ հասնեմ»: Նա կխոսի ձեզ հետ Իր Սուրբ Հոգու միջոցով, ապա դա կլինի Նրա կամքը կատարելու ձեր ընտրությունը: Ես խոստանում եմ, որ եթե դուք անեք դա, առատ օրհնություններ կունենաք:[5]

Տիրոջ առաջնորդության կարիքն այսօր ունենք այնքան, որքան աշխարհը միշտ ունեցել է: Մինչ մենք պատրաստվում ենք լսել Տիրոջ խոսքը, թող որ ջանասիրաբար փնտրենք ճշմարտության Հոգին, որպեսզի երբ Տերը խոսի Իր ծառաների միջոցով, մենք կարողանանք հասկանալ, կատարելագործվել և ցնծալ միասին:[6]

Ես վկայում եմ, որ «այդ բաները կատարելով, դժոխքի դռները չեն հաղթի [մեզ]. այո՛, և Տեր Աստված [մեր] առջևից կցրի խավարի զորությունները և այնպես կանի, որ երկինքները կցնցվեն՝ [մեր] բարիքի և իր անվան փառքի համար»:[7]

ՀՂՈՒՄՆԵՐ
1. Տես Ծննդոց 1.28:
2. Ամովս 3.7
3. Վարդապետություն և Ուխտեր 21.5
4. Վարդապետություն և Ուխտեր 1.38
5. «Աստծո զավակն եմ», *ՀՄԵ, էջ 58*
6. Տես Վարդապետություն և Ուխտեր 50.21-22
7. Վարդապետություն և Ուխտեր 21.6

ՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՅՍ ՈՒՂԵՐՁԻՑ

Գերագույն համաժողովի ժամանակ մենք կարող ենք ստանալ անձնական պատասխաններ մեր հարցերին և խնդիրներին, մինչ կլսենք Աստծո նշանակած ծառաներին: Խորհեք, թե ինչպես կարող եք քննարկել հետևյալը նրանց հետ, ում ուսուցանում եք. Ինչպե՞ս կարող եք նախապատրաստվել նման պատասխաններ ստանալ գերագույն համաժողովի ժամանակ: Նախագահ Ուխդորֆը խրախուսում է մեզ «ջանասիրաբար փնտրել ճշմարտության Հոգին»: Ի՞նչ է սա նշանակում և ինչպե՞ս դուք կարող եք ներառել այն ձեր նախապատրաստություններում: Ի հավելումն Վարդապետություն և Ուխտեր 21.6 հատվածում նշված օրհնությունների, ուրիշ ի՞նչ օրհնություններ են տրվում, երբ դուք նախապատրաստվում եք լսել Տիրոջ խոսքերը Նրա ծառաների միջոցով: Կարող եք հրավիրել նրանց, ում այցելում և ուսուցանում եք, գրել օրագրում, թե ինչ է Հոգին ուսուցանում իրենց այս գերագույն ժողովի ժամանակ:

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐ

Նախապատրաստվել լսել Աստծո ձայնը

Նախագահ Ուխդորֆը բացատրում է, որ տղամարդուն և կնոջը ստեղծելուց հետո Աստված առաջին հերթին խոսեց նրանց հետ և տվեց կարևոր տեղեկություններ ու հրահանգներ: Մենք ստանում ենք այդ նույն օրհնությունը ապրիլի և հոկտեմբերի գերագույն համաժողովի ընթացքում, երբ Եկեղեցու ղեկավարները դիմում են մեզ և տալիս խորհուրդ, որը Տերն է ցանկանում, որ մենք լսենք:

Դուք երբևէ լսե՞լ եք Աստծո ձայնը Նրա ծառաների միջոցով գերագույն համաժողովի ընթացքում: Դուք երբևէ ունեցե՞լ եք այնպիսի զգացողություն, ասես որոշակի ուղերձ տվել է ձեր փնտրած պատասխանը: Օրագրում կարող եք գրի առնել այդ փորձառությունը, և թե ինչպես է այն օգնել ձեզ: Ապա նախապատրաստվեք լսել Տիրոջ ձայնը առաջիկա համաժողովին՝ գրի առնելով ձեր ունեցած հարցերը և ուսումնասիրելով դրանք սուրբ գրությունների ձեր ուսումնասիրության ընթացքում: Աղոթեք Երկնային Հորը՝ խնդրելով ստանալ պատասխաններ և ոգեշնչումներ համաժողովի ընթացքում: Մինչ դուք կլսեք Տիրոջ ծառաներին, կենտրոնացեք ձեր անձնական ոգեշնչումների վրա: Ի՞նչ սովորեցիք: Փոխվելու ի՞նչ ոգեշնչում զգացիք: Գրի առեք այդ ոգեշնչումները, քանի որ այդպիսով Հոգին է խոսում ձեզ հետ:

Միշտ հիշեք, որ Երկնային Հայրը սիրում է ձեզ և ցույց կտա ճիշտ ուղին: Երբ դուք ջանաք լսել Նրա ձայնը Իր ծառաների միջոցով, դուք կօրհնվեք և կկատարելագործվեք:

ԵՐԵԽԱՆԵՐ

Պատրաստվեք համաժողովին:

Գրեք այդ հուշումները թերթիկի վրա: Համաժողովի ընթացքում պահեք թերթիկը ձեզ մոտ, որպեսզի կարողանաք գրի առնել ձեր սովորածը:

Գրի առեք ձեր հարցերը: Ես խորհում եմ հետևյալ հարցերի շուրջ. . . .

Աղոթեք Երկնային Հորը: Կցանկանայի, որ ինձ օգնեն սովորել հետևյալի մասին. . . .

Լսեք գերագույն համաժողովը: Ես սովորեցի . . .

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17: Թարգմանության հաստատումը. 6/17: *First Presidency Message, March 2018*-ի թարգմանությունը: Armenian. 15049 201

Աղոթեք յուրաքանչյուր քրոջ համար անվանապես

Մեր սերը և ոգեշնչումը նրանց վերաբերյալ, ում այցելում և ուսուցանում ենք, կմեծանա, երբ խոնարհաբար աղոթենք յուրաքանչյուր քրոջ համար՝ անուն առ անուն:

Հավատք, Ընտանիք, Սփոփանք

Սուրբ գրություններում խոսվում է բազմաթիվ տղամարդկանց ու կանանց մասին, ովքեր անվանապես աղոթել են ուրիշների համար: Ակնառու օրինակներից մեկը Ալմա Կրտսերի հայրն է: Հրեշտակը խոսեց Ալմա Կրտսերի հետ, ասելով նրան. «Քո հայրը աղոթել է մեծ հավատքով՝ քեզ համար . . . հետևաբար, այս նպատակով եմ ես եկել համոզելու քեզ Աստծո զորության և իշխանության վերաբերյալ, որպեսզի նրա ծառաների աղոթքները կարողանան պատասխանվել՝ համաձայն իրենց հավատքի (Մոսիա 27.14):

Միմյանց համար աղոթելը բացում է մեր սրտերը, ստանալու այն օրհնությունները, որոնք Տերը ցանկանում է մեզ տալ: «Աղոթքի նպատակը Աստծո կամքը փոխելը չէ, այլ մեր և ուրիշների օրհնություններն ապահովելը, որոնք Աստված կամենում է շնորհել, բայց որոնք մենք պետք է խնդրենք, որպեսզի ստանանք»:[1]

Մի քույր պատմում էր, որ իր կյանքի դժվարին պահերին՝ «չափազանց դժվար օրերին» հաճախ մի հեռախոսազանգ կամ մի պարզ հաղորդագրություն էր ստանում իր այցելող ուսուցիչներից: Կարծես նրանք գիտեին, թե երբ էր նա աջակցության կարիք ունենում: Նա գիտեր, որ քույրերն աղոթել էին իր համար թե՛ իրենց այցելությունների ընթացքում, և թե՛ իրենց անձնական աղոթքներում:

«Մտածեք մեր միացյալ ուժի մասին, եթե յուրաքանչյուր քույր առավոտյան և երեկոյան անկեղծորեն աղոթի, կամ թերևս անդադար աղոթի, ինչպես Տերն է պատվիրել»,- ասել է Ջուլի Բ. Բեքը՝ Սփոփող Միության գերագույն նախագահությունից:[2] Աղոթելով նրանց համար , ում այցելում և ուսուցանում ենք, մենք ամրացնում ենք մեզ որպես անհատներ և որպես Վերջին Օրերի Սուրբ կանայք:

Նախագահ Հենրի Բ. Այրինգը՝ Առաջին Նախագահության Առաջին Խորհրդականը, ասել է. «Աղոթեք, որպեսզի իմանաք նրանց սիրտը. . . Դուք պետք է իմանաք, թե ինչ է Աստված ուզում, որ դուք անեք, որպեսզի օգնեք նրանց և անեք ամեն բան՝ հնարավորինս զգալով Աստծո սերը նրանց հանդեպ»:[3]

ՀՂՈՒՄՆԵՐ

1. Սուրբ գրքերի ուղեցույց, «Աղոթք»:
2. Ջուլի Բ. Բեք, «Ինչ են Վերջին Օրերի Սուրբ կանայք լավագույնս կատարում. կանգնում են ամուր և անսասան», *Լիահոնա,* նոյեմբեր 2007, 110:
3. Հենրի Բ. Այրինգ, «Քահանայությունը և անձնական աղոթքը», *Լիահոնա,* մայիս 2015, 85:

Խորհեք այս մասին

Վերջերս ի՞նչ ոգեշնչում և գաղափարներ եք ունեցել, մինչ անհատապես աղոթել եք քույրերի համար, ում այցելում և ուսուցանում եք:

Ծառայություն

Յուրաքանչյուր քրոջ համար անվանապես աղոթելով, մենք կստանանք անձնական ոգեշնչում, որ իմանանք, թե ինչպես արձագանքել յուրաքանչյուր քրոջ կարիքներին, ում այցելում ենք:

© 2018 by Intellectual Reserve, Inc. Բոլոր իրավունքները վերապահված են: Տպագրված է ԱՄՆ-ում: Անգլերենի հաստատումը. 6/17: Թարգմանության հաստատումը. 6/17: *Visiting Teaching Principles, March 2018*-ի թարգմանությունը: Armenian 15049 201